ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԱԺՈՂԿՈՄԱՏ

Միջնակարգ դպրոցների վարչություն

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ՎՈՉ ԼՐԻՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ 5-ՐԴ, 6-ՐԴ ՅԵՎ 7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

891.99(07)
Գ-87

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1937

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ
Միջնակարգ դպրոցների վարչություն

13 APR 2011
891.99(07)
Գ-87
ար

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ՎՈՉ ԼՐԻՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ 5-ՐԴ, 6-ՐԴ ՅԵՎ 7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1937

2 2 MAR 2015

Տեխնիկական խմբագիր՝ Հր. Կոբոդյան
Սրբագրիչ՝ Ս. Շահբազյան

67.60

167
37

ԾՐԱԳԻՐ

Վոչ լրիվ միջնակարգ յեվ միջնակարգ դպրոցների 5-րդ, 6-րդ յեվ 7-րդ դասարանների

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցների 5-րդ, 6-րդ և 7-րդ դասարանների գրականության ծրագրում ընդգրկված են հայ նոր և խորհրդային լավագույն գրողների ստեղծագործություններն, ինչպես նաև խորհրդային յեղբայրական ժողովրդների գրականությունից և արևմտա-յեվրոպական լավագույն գրողների ստեղծագործություններից նմուշներ, վորոնց ուսումնասիրության նպատակները պետք է հանդիսանա աշակերտությանը կոմունիզմի վոգով դաստիարակելու, գրական-գեղարվեստական ճաշակը զարգացնելու և կուլտուրական մտահորիզոնն ընդարձակելու գործը։

Այնուհետև՝ 5-րդ, 6-րդ և 7-րդ դասարանների ծրագրերը կազմվել են այն հաշվով, վոր լայն ու բազմակողմանի պատրաստություն տրվի աշակերտությանը՝ 8-րդ դասարանից սկսած հայ գրականության սիստեմատիկ պատմությունն անցնելու համար։

Ծրագրի մեջ յեղած հեղինակների գործերից ընտրություն կատարելիս միշտ ել հաշվի յե առնվել տվյալ դասարանի աշակերտության համար այդ գործերի մատչելիության հանգամանքը։

Ծրագրով տրված նյութերը հաջողությամբ մշակելու համար ուսուցիչները պետք է լավ տիրապետեն գրական-պատմական փաստերին և Մարքս-Լենինյան-Ստալինյան գրականագիտության հիմունքներին։ Ներկա շրջանում, մեր դպրոցներում, գրականության դասավանդման հիմնական արատն է հանդիսանում վուլգար սոցիոլոգիզմը, վորը վոչ մի առնչություն չունի Մարքս-Լենինյան-Ստալինյան գրականագիտության հետ։

Վուլգար սոցիոլոգները գրական քննադատության ամենահիմնական խնդիրը համարում են այս կամ այն գրողի դասա-

կարգային դեմքի վորոշումը։ Յեթե ասենք, վորոշեցինք, թե այսինչ գրողը վոր դասակարգի շահերի և գաղափարների արտահայտիչն է, դրանով նրանք սպառված են համարում իրենց ամբողջ աշխատանքը։ Նրանք ամբողջովին անտես են առնում տվյալ յերկի գեղարվեստական արժանիքները, ռեալ կյանքի արտացոլումը և այլն։

Գրողի դասակարգային դեմքը վորոշելու ժամանակ վուլգար սոցիոլոգները ղեկավարվում են մի շարք միանգամայն անընդունելի սկզբունքներով. այսպես, որինակ՝ գրողի դասակարգային դեմքը վորոշելիս՝ նրանց համար վճռական նշանակություն ունի գրողի սոցիալական ծագումը և դրությունը։ Յեթե վորևե գրող իր սոցիալական ծագումով և դրությամբ պատկանում է բուրժուազիային կամ մանր բուրժուազիային, վուլգար սոցիոլոգների կարծիքով՝ այդ գրողը բացի բուրժուազիայի, կամ մանր բուրժուազիայի աշխարհայացքից իր գործերի մեջ ուրիշ վոչինչ չի կարող ներկայացնել։

Գրողի ստեղծագործական մեթոդը և առհասարակ գեղարվեստական յերկը ամբողջությամբ նույնացնելով այս կամ այն դասակարգի աշխարհայացքի հետ, վուլգար սոցիոլոգները դրանով կանգնում են անցյալի կուլտուրական ժառանգության վերամշակման և ոգտագործման անհրաժեշտությունը ժխտելու հակալենինյան դիրքերի վրա։

Այս բոլորն, իհարկե, չի նշանակում, վոր ժխտելով վուլգար սոցիոլոգիզմը — պետք է առհասարակ հրաժարվել պարզաբանելուց, թե այս կամ այն գրողն իր ստեղծագործության մեջ ինչ դասակարգի յե համակրել։ Ամեն մի գրող յեղել է իր դասակարգի զավակը և իր եպոխայի ծնունդը։ Բայց գեղարվեստական ստեղծագործության մեջ արտահայտվում է նաև վորոշ պատմական իրականություն։ Այս է պատճառը, վոր, վորպես որենք, անցյալի բոլոր կլասիկ խոշոր գրողները հաճախ վեր են բարձրանում իրենց դասակարգի նյութական պրակտիկայի և աշխարհայացքի սահմաններից, վեր են բարձրանում իրենց եպոխայից և շոշափում են այնպիսի պրոբլեմներ, վորոնք ավելի լայն են, ավելի խորը, ավելի հարուստ և ավելի բազմակողմանի քան թե այն դասակարգի աշխարհայացքը, վորի հետ, վերջին հաշվով, կապվում է գրողը և հենց այս հանգամանքով է նախ և առաջ պայմանավորվում տվյալ գրողի ստեղծագործության գեղարվեստական արժեքը։ Այս տեսակետից ցայտուն ապացույց կարող է հանդիսանալ՝ Հ. Թումանյանի ստեղծագործությունը։

«Մեծ արվեստագետները կենդանի յեն մեզ համար։ Նրանց

աշխատանքն իզուր չի անցել — նրանց լավագույն ստեղծագործություններն արթնացրել են մտքերը և ոգնել են ժողովրդին առաջ շարժվելու և գտնելու ազատության ճանապարհը։ Կլասիկների ստեղծագործություններն իրենց կենդանի շնչով և մարդկային ջերմ սրտի բաբախյունով կարող են ոգնել մեր յերիտասարդությանը հասկանալու վոչ միայն անցյալը, այլ և ներկան» («Պրավդա»)։

Գրականության ամեն մի ուսուցիչ պետք է շատ լավ հասկանա կլասիկ գրականության տրված՝ այս սքանչելի գնահատականի եությունը։

5-րդ դասարան

1. 5-րդ դասարանից սկսած աշակերտներին պետք է աստիճանաբար պատրաստել այնպես, վոր նրանք հետզհետե կարողանան իրենց առաջադրված գրական—գեղարվեստական յերկերը ճիշտ հասկանալու, վերլուծելու և գնահատելու ունակություններ ձեռք բերելու։

2. 5-րդ դասարանում ուսուցիչն աշակերտությանը պետք է ծանոթացնի հեղինակների պարզ կենսագրության հետ։

3. Աշակերտը պետք է կարողանա վորոշել կոնկրետ, առանձին ստեղծագործությունների թեման, և այն, թե ի՞նչ է ուզում ասել հեղինակն այդ գրվածքով։

4. Այս դասարանում պետք է ընդհանուր գաղափար տրվի եպիկական և լիրիկական ժանրերի մասին, այնուհետև պետք է աշակերտությանը ծանոթություն տրվի եպիկական ժանրի մի քանի տեսակների, հատկապես առակի, հեքյաթի, հերոսական պոեմի և պատմվածքի մասին։ Եպիկական ժանրի այս տեսակների ուսուցման ընթացքում համապատասխան որինակներ կարելի յե վերցնել ծրագրի ֆոլկլորի բաժնում յեղած նյութերից և Թումանյանի ու Աղայանի ստեղծագործություններից։

5. Առակի և հեքյաթի կապակցությամբ պետք է բացատրվի թե ինչ բան է այլաբանությունը (ալեգորիա)։

6. 5-րդ դասարանում պետք է գրավոր աշխատանքներ տրվեն կոնկրետ—առանձին գրվածքների բովանդակության շուրջը։ Աշակերտը պետք է կարողանա ինչպես բանավոր՝ այնպես ել գրավոր համառոտ՝ եյական գծերով վերարտադրել տվյալ գրվածքի բովանդակությունը։

ՆՅՈՒԹԵՐ

1. Հակոբ Հակոբյան

ա) Լուսաբացին

բ) Մաքառման ժամին

գ) Համերգ
դ) Մետաքսագործարանում
յե) Ստեփան Շահումյան
զ) Աշխատանքի յերգ

2. Դեմեն Դեմիրճյան

ա) Արդուլը

3. Արազի

ա) Խորհրդային առավոտ
բ) Լույսերը

4. Նայիրի Զարյան

ա) Բուքը, մարդը մեքենա (հատված «Ռուշանի քարափից»)
բ) Տրակտորը

5. Գեղամ Սարյան

ա) Ալվարդ
բ) Խնդություն

6. Սուրեն Վահունի

ա) Յերգ պարտիզանի, նրա կնոջ և ձիու մասին

7. Հովհ. Շիրազ

ա) Ցեղեվնիները

8. Հովհաննես Թումանյան

ա) Գիքորը
բ) Իմ ընկեր Նեսոն
գ) Նեսոյի քարաբաղնիսը
դ) Արծիվ ու կաղնին
յե) Գութանի յերգը

10. Վրթանես Փափազյան

ա) Արտը
բ) Հողի աշխատավորը

11. Նար-Դոս

ա) Սաքուլն ուխտ գնաց (կրճատ)

12. Ավետիք Իսահակյան

ա) Կանաչ գարունին
բ) Մանկություն
գ) Անմահ արեվի վառ դգվանքի տակ

13. Աթաբեկ Խնկոյան

ա) Բարեսիրտ աղվեսը
բ) Փայտահատն ու մահը

14. Ալեքսանդր Պուշկին

ա) Կալանավոր
բ) Զաղայեվին
գ) Աքսորյալ դեկաբրիստներին
դ) Թռչնիկը
յե) Տերտերն ու իր Բալդի ծառան

15. Մաքսիմ Գորկի

ա) Հունվարի 9-ը
բ) Կազանում («Իմ համալսարանների»-ից)

16. Դիմիտրի Ֆուրմանով

ա) Հատվածներ «Զապայեվ»-ից

17. Սերաֆիմովիչ

ա) Կոժուխի հաղթությունները («Յերկաթե հեղեղ»-ից)

18. Կ. Լորբիպանիձե

ա) Մեքին (հատվածներ «Կորչի յեգիպտացորենի հանրապետությունը» վեպից)

19. Վիկտոր Հյուգո

ա) Բարիկադների վրա
բ) Բարիկադներում

20. Ե. Զոլա

ա) Գործադուլ (հատված «Ժերմինալից»)

21. Ժողովրդական ստեղծագործություն

ա) Զարթիր—Լենին, հոգուդ մեռնեմ
բ) Ստալին
գ) Պողպատե մարդը (Ստալին)
դ) Կոտ ու կես
յե) Լուսնակն անուշ
զ) Արտուտիկ
ե) Ծույլ հնձողք
ը) Այծի թաղումը (ռուս. ժող. հեքյաթ)
թ) Սուրբը (ղազախ. ժող. հեքյաթ)
ժ) Սվյատոգորը
ժա) Ծաղկի հեքյաթը—մշակ. Հովհ. Թումանյանի
ժբ) Քաջ Նազար—մշակ. Հովհ. Թումանյանի

6-րդ դասարան

1. 6-րդ դասարանից սկսած հեղինակները դասավորված են պատմական հաջորդականությամբ, այս հանգամանքը գալիս է ասելու, որ 6-րդ դասարանից սկսած՝ ուսուցիչները պետք է

շոշափեն (բացի հեղինակների կենսագրությունները պատմելուց) գրական-պատմական բնույթի մի շարք հարցեր. այսպես որինակ՝ պետք է մոտավոր գաղափար տրվի, թե ինչ դեր է կատարել տվյալ հեղինակը գրականության պատմության զարգացման ընթացքի մեջ, ինչ է ստեղծել և ինչ են սովորել նրանից հետագա գրողները։

2. Այս դասարանում տրված նյութերը հնարավորություն են ընձեռնում ուսուցչին, վորպեսզի նա աշակերտությանը ծանոթացնի հայ գրական լեզվի զարգացման ընթացքի հետ՝ սկսած Խաչատուր Աբովյանից։

3. 6-րդ դասարանից սկսած պետք է խոսվի նաև հեղինակների աշխարհայացքի մասին և նրանց ստեղծագործությունների գեղարվեստական արժեքի մասին։ Այս առթիվ ուսուցիչները պետք է ամեն կերպ խուսափեն վուլգար սոցիոլոգիզմից՝ աշխարհայացքը գեղարվեստական ստեղծագործության ամբողջության հետ նույնացնելուց։

4. 6-րդ դասարանում պետք է գաղափար տալ գրական ուղղությունների մասին, նախ և առաջ ռոմանտիզմի և ռեալիզմի մասին. ռոմանտիկական ուղղության հետ ծանոթացնելու համար փաստեր կարելի յե վերցնել Աբովյանի, մասամբ Աղայանի և Մուրացանի ստեղծագործություններից, իսկ ռեալիզմին ծանոթացնելու համար՝ Պռոշյանի, Թումանյանի և այլ գրողների ստեղծագործություններից։

5. Եպիկական և լիրիկական ժանրերի մասին 5-րդ դասարանում տված տեղեկությունները 6-րդ դասարանում պետք է ավելի ընդարձակել։ Աշակերտներին պետք է ծանոթացնել լիրիկական ժանրի զանազան տեսակների հետ (յերգ, ներբող, եղեգիա և այլն) միաժամանակ գաղափար տալով վոտանավորի չափերի, հանգերի, ռիթմի և յերաժշտականության մասին։ Համապատասխան որինակներ կարելի յե վերցնել Հովհաննիսյանի, Ծատուրյանի, Թումանյանի և մյուս բանաստեղծների ստեղծագործություններից։

6. 6-րդ դասարանում պետք է հասկացողություն տալ բանաստեղծական լեզվի մի շարք հատկանիշների՝ եպիտետների, համեմատությունների և մետաֆորների մասին։

7. Գրավոր աշխատանքների համար իբրև թեմա պետք է վերցնել, բացի առանձին ստեղծագործությունների բովանդակության շարադրանքից նաև այդ ստեղծագործությունների գլխավոր հերոսների բնութագրումներ։

ՆՅՈՒԹԵՐ

1. Խաչատուր Աբովյան

ա) Զմեռ (հատված «Վ. Հ.»-ից)
բ) Զանգի
գ) Ես գրքի ճամբի խրատը

2. Միք. Նալբանդյան

ա) Յերգ ազատության

3. Պերճ Պռոշյան

ա) Միկիտան Սաքոն (հատված «Հացի խնդիր» վեպից)
բ) Ցասաուլ (հատված «Հացի խնդիր» վեպից)
գ) Տանուտեր Խուդոն (հատված «Ցեցեր»-ից)

4. Ղազարոս Աղայան

ա) Ճախարակ
բ) Սերմնացան (խմբագրած)
գ) Տրք-Անգեղ
դ) Արզումանի և Ճաղարանց տղերքի կռիվը (հատված «Յերկու քույր» վեպից)
յե) Վարդանն ու Ճաղարանց Թաթոսը —»—

5. Հովհ. Հովհաննիսյան

ա) Ժայռը
բ) Ալագյազ բարձր սարին
գ) Սարն ի վեր
դ) Արտավազդ

6. Հակոբ Հակոբյան

ա) Ամբոխն իմ աշխարհ
բ) Ցես այն եմ սիրում
գ) Հեղափոխություն
դ) Կարմիր դարնան
յե) Մեռան-չկորան

7. Մուրացան

ա) Զիբուխլու (հատված «Առաքյալ» վեպից)
բ) Մոսինի դպրոցը (հատված «Առաքյալ» վեպից)
գ) Դիլիջան (հատված «Առաքյալ» վեպից)

8. Ալեքսանդր Ծատուրյան

ա) Ցեկ, գարնան անձրև
բ) Սերմնացան
գ) Բանվորուհու որորը
դ) Գետակ

յե) Պոետին

9. Հովհաննես Թումանյան

ա) Սասունցի Դավիթ

բ) Հառաչանք

գ) Լոռեցի Սաքոն (կրճատ)

դ) Նվեր Վրաստանի բանաստեղծներին

10. Հակոբ Պարոնյան

ա) Քաղաքավարության ջնասներ (մի քանի գլուխ)

11. Դերենիկ Դեմիրճյան

ա) Ռաշիդը (կրճատ)

12. Նայիրի Զարյան

ա) Սաքո Միկինյան

բ) Զաթնանց Սանթրոսը և նրա հոդեն (հատված «Ռուշանի քարափից»)

գ) Նոր գյուղը » »

դ) Գյուղի տունը » »

13. Ստեփան Զորյան

ա) Ահավոր գիշեր և անծանոթ տեղեր (հատված «Մի կյանքի պատմությունից»)

14. Գեղամ Սարյան

ա) Պատգամավորը

բ) Կգա նա

գ) Ֆրանսիսկա Սոլան

15. Ալ. Պուշկին

ա) Զմեռվա իրիկուն

բ) Կովկաս

գ) Հուշարձան

դ) Բուքը (հատված «Կապիտանի աղջիկը» վեպից)

16. Տարաս Շևչենկո

ա) Կտակ

բ) Որոր

գ) Ինչու յեմ յես տխուր

17. Նիկոլայ Ոստրովսկի

ա) Պավել Կորչագինի քաջագործությունները (հատված «Ինչպես ե կոփվում պողպատը» վեպից)

բ) Շչակը (հատված «Փոթորկածիններ» վեպից)

18. Եգնատի Նինոովիլի

ա) Ապաստամբություն Դուրիայում

բ) Պալիաստոմի լիճը

19. Միխ. Զավախիովիլի

ա) Արդար դատաստան

բ) Արսեն Մարաբդեցու փախուստը բանտից (հատվածներ «Արսեն Մարաբդեցի» վեպից)

20. Հայնրիխ Հայնե

ա) Շլեզվիգի ջուլհակները

բ) Ֆիրդուսի

21. Հանրի Բարբյուս

ա) Յերկաթե ձեռքը (հատված «Ստալին» գրքից)

բ) Կրակը (հատված համանուն վեպից)

7-րդ դասարան

1. 7-րդ դասարանում պետք ե ավելի խորացնել նախորդ դասարանների ծրագրի կետերում առաջադրվող գիտելիքները։

2. 7-րդ դասարանում, բացի հեղինակների՝ առանձին գործերը վերլուծելուց և գնահատելուց, վորոշ դեպքերում պետք ե նաև նրանց ամբողջական ստեղծագործության մասին գաղափար տալ։ Այդ կարելի յե անել այն հեղինակների նկատմամբ, վորոնց ստեղծագործությունները սկսած 5-րդ դասարանից—ամբողջ յերեք տարի անընդհատ տեղ են գտել ծրագրի մեջ. այսպես որինակ՝ Թումանյանի, Հակոբ Հակոբյանի, Զարյանի և այլ հեղինակների։

3. Գրական ուղղություններից՝ 7-րդ դասարանում պետք ե բացատրել հեղափոխական ռոմանտիզմի և սոցիալիստական ռեալիզմի եյությունը հեղափոխական ռոմանտիզմի բացատրության համար, իբրև փաստեր կարելի յե վերցնել Մաքսիմ Գորկու՝ ծրագրում մտած ստեղծագործություններից մի քանիսը (Բազեյի յերգը, Դանկոյի սիրտը), Վշտունու «Ռամ-Ռոյ» պոեմը և այլն։ Սոցիալիստական ռեալիզմի բացատրության համար իբրև փաստեր կարելի յե վերցնել Մաքսիմ Գորկու, Շոլոխովի, Զարյանի և այլ գրողների ստեղծագործությունները։

4. 7-րդ դասարանում ել ավելի հարստացնելով աշակերտների գիտելիքները գրական ժանրերի մասին (որինակ՝ ասենք Ռուսթավելու «Վագրենավոր»-ից, ծրագրում յեղած հատվածներն ել ավելի լավ պատկերացում կտան աշակերտին եպիկական ժանրի վորոշ տեսակի մասին և այլն), պետք ե կանգ առնել դրամատիկական ժանրի վրա՝ իբրև փաստ ոգտագործելով Սունդուկյանի «Պեսոն»։

5. 7-րդ դասարանում պետք է գաղափար տրվի յերգիծաբանության մասին — յերգիծանքի տեսակների մասին (հումոր, սարկազմ). այս բանի համար իբրև փաստեր կարելի յե ոգտագործել Սունդուկյանի, Պարոնյանի, Սալտիկով-Շչեդրինի և ուրիշների՝ ծրագրում յեղած ստեղծագործությունները։

6. 7-րդ դասարանում պետք է հանձնարարվեն այնպիսի գրավոր աշխատանքներ, վորոնք ավելի ուժեղ արտահայտեն իրենց մեջ աշակերտի ակտիվ վերաբերմունքը դեպի գեղարվեստական յերկը. այդ գրավորներում աշակերտները պետք է կարողանան բացահայտել տվյալ գրվածքի իդեան և տան նրա գեղարվեստական արժեքի գնահատականը։

ՆՅՈՒԹԵՐ

1. Գաբրիել Սունդուկյան

ա) Պեպո (կրճատ)

2. Շիրվանզադե

ա) Արտիստը (կրճատ)

բ) Հրդեհ նավթահանքում (հատված «Քառս» վեպից)

3. Հովհ. Թումանյան

ա) Փարվանա

բ) Անուշ (կրճատ)

4. Նար-Դոս

ա) Նեղ որերից մեկը

բ) Հոգուն վրա հասավ

5. Ավետիք Իսահակյան

ա) Ալագյազ աստղերի մեջ

բ) Արագածին

գ) Մանթաշին

դ) Կանաչ գարունին

յե) Զառ Մանթաշի ծաղկոտ լանջին

զ) Հեյ, Արագածին...

ե) Լճակի փերին

ը) Նորից յեկան գարնան անուշ որերը

թ) Անհուն վրեժի և ատելության

6. Վահան Տեր-յան

ա) Արեվածագ

բ) Վերադարձ

գ) Ստեփան Շահումյան

դ) Հրաժեշտի դաղել

յե) Շշուկ ու շրշյուն

7. Շուշանիկ Կուրղինյան

ա) Բանվորները

բ) Հանգրեք ջահերը

գ) Գուլթանի յերգը

8. Պետրոս Դուրյան

ա) Լճակ

բ) Իմ մահը

9. Հակոբ Պարոնյան

ա) Աբիսողոմ աղան և խմբագիրը (հատված «Մեծապատիվ մուրացկաններ» վեպից)

բ) Աբիսողոմ աղան և բանաստեղծը » »

10. Հակոբ Հակոբյան

ա) Նոր առավոտ

բ) Վոլխովստրոյ

11. Արազի

ա) Բաբելոնի աշտարակը

բ) Դավաղրություն

12. Ազատ Վշտունի

ա) Լենին

բ) Ադրբեջան

գ) Ռամ-Ռոյ (կրճատ)

դ) Լուսադեմին (հատված)

13. Նայիրի Զարյան

ա) Ստալին

բ) Յերկու հանճարեղ գլուխ

գ) Առաջին մարտը (հատված վեպից)

14. Միքայել Մանվելյան

ա) Աղա Խոսրովը (կրճատ)

բ) Զարթոնք (հատված)

15. Սրաս

ա) Զրանցքը կխոսի

16. Մ. Ցու. Լերմոնտով

ա) Մծիրի (կրճատ)

բ) Պուշկինի մահը

17. Սալտիկով-Շչեդրին

ա) Հեքիաթ փութեռանդ պետի մասին, թե ինչպես նա ինքը զարմանքի մեջ ընկավ իր գործողություններից

18. Լ. Ն. Տոլստոյ

ա) Հայի Մուրադ (հատվածներ համանուն վեպից)

բ) Պոլիկուշկա

19. Մաքսիմ Գորկի

ա) Մայրը (հատված համանուն վեպից)

բ) Բազեյի յերգը

գ) Մրրկահավի յերգը

դ) Դանկոյի սիրտը

20. Վլադիմիր Մայակովսկի

ա) Պոմպադուր

բ) 1917 թ. ապրիլ

21. Ա. Ֆադեյեվ

ա) Ճահճուտը (հատված «Զախջախում»-ից)

22. Մ. Շոլոխով

ա) Նագուլնով («Հերկած խոպան»-ից)

բ) Վարը («Հերկած խոպան»-ից)

23. Շոթա Ռուսթավելի

ա) Ավթանդիլի նամակն իր ստորադրյալներին («Վագրենավոր»-ից)

բ) Ավթանդիլը գնում է վորոնելու Տարիելին («Վագրենավոր»-ից

24. Իլիա Ճավճավաձե

ա) Պոետ

բ) 1871 թ. 23 մայիս

գ) Գարուն

դ) Ելեգիա

յե) Ով գեղեցիկ իմ աշխարհ

զ) Մաճկալ

25. Սաբիր

ա) Բեյնելմիլել

բ) Հողի մշակը

գ) Հարուստը Բագվի ֆահլաներին

26. Ռոմեն Ռոլան

ա) Ժան Քրիստոֆի մանկությունը (հատված «Ժան Քրիստոֆ» վեպից)

Նմուշներ իսպանական հեղափոխական գրականությունից

ա) Գիշերը Մադրիդի վրա—Մաթիլդ դը Լաթոր

բ) Բալլադ 12 փայտահատների մասին—Ռաֆայել Ալբերտի

գ) Մենք հզոր մի հոկտեմբեր—Պլա-ի—Բելտրան։

Ժողովրդական ստեղծագործություն

ա) Լենին հսկա

Հանձնված է արտադրության 23/VIII 1937 թ.
Ստորագրված է տպագրության 31/VIII 37 թ.
Գլավլիտի լիազոր Գ—4200 պատվեր 1077
Հրատ. 4252, տիրաժ 3000
Պետհրատի տպարան, Ցերեվան, Լենինի փող., № 65

ՀՀ Ազգային գրադարան
NL0379139

ԳԻՆԸ 40 Կ.

61.604

Программа

По арм. литературе

для 5, 6, 7 классов неполной средн. и средней школы

Гиз Арм. ССР, Ереван, 1937 г.